*Հավելված N6*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 09-ի*

*N 427 -Ա հրամանի*

*Օրինակելի ձև*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ԳՀԾՁԲ-2025/05**

Պատվիրատուն՝ **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը,** որը գտնվում է **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 2, M1, Երևան – Գյումրի - ՀՀ սահման (Բավրա) ավտոճանապարհի Աշտարակ-Թալին 34 կմ ճանապարհահատվածի մուտքերի կառուցման նպատակով հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) լրացման պատրաստման» ծառայությունների** մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմերը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **7-րդ օրվա ժամը 16:00-ն**: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **7-րդ օրվա ժամը 16:00-ին /2025 թվականի դեկտեմբերի 23-ին/:**

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Արմինե Շալունցին:**

**Հեռախոս՝ 010 54 21 76**

**Էլ. Փոստ՝** procurement@armroad.am

**Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**

***Սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:***